

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016թ. **ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ** ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանում բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջադիմությունը կազմել է 97,7 տոկոս (2014թ.՝ 95,8 տոկոս, 2015թ.՝ 94,7 տոկոս): Հեռակա համակարգում այդ ցուցանիշը եղել է 87,2 տոկոս (2014թ.՝ 79,5 տոկոս, 2015թ.՝ 78 տոկոս):

Մագիստրատուրայում առաջադիմությունը կազմել է 99 տոկոս (2014թ.՝ 98,5 տոկոս, 2015թ.՝ 97,5 տոկոս):

Շրջանավարտների թիվը կազմել է՝ բակալավրիատի առկա ուսուցման համակարգ՝ 100 ուսանող (2014թ.՝ 87 ուսանող, 2015թ.՝ 20 ուսանող): Հեռակա համակարգում այդ ցուցանիշը եղել է 45 ուսանող (2014թ.՝ 52 ուսանող, 2015թ.՝ 73 ուսանող):

Մագիստրատուրայի շրջանավարտների թիվը՝ առկա համակարգ՝ 2016թ.՝ 31 ուսանող (2014թ.՝ 40 ուսանող, 2015թ.՝ 24 ուսանող): Հեռակա համակարգ՝ 2016թ. շրջանավարտ չի եղել (2014թ.՝ 22 ուսանող, 2015թ.՝ 6 ուսանող):

Ֆակուլտետի չորս մասնագիտությունների *Մասնագիտական կրթական ծրագրերը* փորձաքննություն են անցել, դրանցից *Անգլերեն լեզու և գրականություն* մասնագիտության *կրթական ծրագիրը*՝ միջազգային փորձաքննության (2015թ.): Փորձաքննություն չի անցել միայն *Թարգմանչական գործ* մասնագիտության *Մասնագիտական կրթական ծրագիրը*:

Ուսումնական պլանները վերանայվել և վերամշակվել են և 2014թ. ֆակուլտետում ուսուցումը կազմակերպվում է կրթական պահանջները բավարարող համալսարանական ուսումնական պլաններով:

Ամբիոնների աշխատակիցները ունեցել են գիտական հաջողություններ:

Հայոց լեզվի ամբիոն - 2016 - 1 ուսումնական ձեռնարկ-ինքնուսույց (Դ.Գյուլզատյան, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ (ուսումնական ձեռնարկ-ինքնուսույց), Գլոբալ համալսարան, 1211South Glenstone Avenue Springfield, Missouri 65804 USA, Երևան, 2016, 366 էջ), 16 հոդված, 4 թեզիս

Գրականության ամբիոն - 2016 - 1 մենագրություն (Հովհ. Այվազյան, Արձագանքներ, Վանաձոր, Սիմ տպագրատուն ՍՊԸ, 2016, 242 էջ), 10 հոդված:

Ռուսաց լեզվի ամբիոն - 2016 - 5 հոդված

Օտար լեզուների ամբիոն - 2016 - 4 հոդված:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը ունեցել է ձեռքբերումներ կամ մասնակցել միջոցառումների՝

Դպրոց-բուհ կապ

Հայոց լեզվի ամբիոն - Հոկտեմբերի 22-23-ը ամբիոնի՝ բուհ-դպրոց կապի համակարգող Ա.Եդոյանը կազմակերպել է Վանաձորի 19-րդ դպրոցի հայոց լեզվի մասնախմբի ուսուցիչների այցը ԼՂՀ՝ Արցախի անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովին մասնակցելու նպատակով: Այս աշխատանքային խումբը գիտաժողովին ներկայացրել է «Աշակերտի հայրենասիրական

դաստիարակությունը արցախյան ազատամարտի թեմաներով» զեկուցումը, որն արժանացել է հավանության:

Գրականության ամբիոն – Ապրիլին և նոյեմբերին Լոռու մարզի 8-12-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել է ասմունքի մարզային մրցույթ-փառաստոն:

12.05-ին «Քվանտ» վարժարանում ամբիոնի վարիչ Վ.Փիլոյանը անցկացրել է բաց դաս «Ե.Չարենցի ստեղծագործությունը» թեմայով:

Օտար լեզուների ամբիոն – Մարտին Լոռու մարզի ավագ դպրոցների աշակերտների համար կազմակերպվել է օլիմպիադա անգլերենից:

Ռուսաց լեզվի ամբիոն – Մայիսի 18-ին կազմակերպվել է բաց դաս քաղաքի ավագ դպրոցներների աշակերտների համար, որը վարել է ամբիոնի վարիչ Կ.Առուստամյանը:

Մայիսի 20-ին Լոռու մարզի ավագ դպրոցների աշակերտների համար կազմակերպվել է «И пробуждается поэзия во мне» խորագրով ասմունքի մրցույթ՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին:

Ապրիլի 1-ին Լոռու մարզի ավագ դպրոցների աշակերտների համար կազմակերպվել է օլիմպիադա ռուսաց լեզվից:

Մասնագիտական կրթական ծրագրեր

2016թ. վերանայվել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրական կրթական ծրագրի 5 բաղադրիչ՝

Ապրիլ – Ծրագրի նպատակի հստակեցում ուսանողների և դասախոսների շարժունությունն ապահովելու նպատակով (ՄԿԾ-ի համադրելիություն այլ բուհերի համանման ՄԿԾ-ների հետ բենչմարքինգի միջոցով):

Մայիս - Դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների վերանայում՝ ըստ գործուն և ոչ գործուն (ակտիվ և պասիվ) մեթոդների համատեղման՝ ուսանողների ընդունակություններին համապատասխան:

Մայիս – Գնահատման համակարգի գործնական իրացման ձևերի մշակում՝ **ա) ընկալում, բ) գիտելիք, գ) հմտություն, դ) կարողություն** լրակազմը ապահովելու նպատակով:

Հունիս– Ամբիոնի հետազոտական աշխատանքների և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության ապահովում (անհրաժեշտ ուսումնասիրություններն ընդգրկել ԱՌԻՄՓ-ներ և ներդնել ՄԿԾ-ի բարելավված տարբերակ):

Հունիս – Դասընթացների (մոդուլների) վերջնարդյունքների և ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանության վերանայում և բարելավում:

Հոկտեմբեր - «Լրագրություն» մասնագիտության բակալավրական կրթական ծրագիրը 12.10-ին քննարկվել է ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդում, իսկ 24.10-ին՝ ռեկտորատի նիստում

Գիտաժողովներ

Հոկտեմբերի 13-14-ը ռուսաց լեզվի ամբիոնը կազմակերպել է 4-րդ միջազգային գիտաժողովը *Լեզուն և գրականությունը միջնադարյան հաղորդակցության համատեքստում* թեմայով (նվիրված ՀՀ Անկախության 25-ամյակին):

Գիտական աստիճան, կոչում

Բաբոյան Արփինե - բանասիրական գիտությունների թեկնածու (հայոց լեզվի ամբիոն)

Ղազարյան Քրիստինե – բանասիրական գիտությունների թեկնածու (գրականության ամբիոն)

Պապոյան Աննա – դոցենտ (օտար լեզուների ամբիոն)

Հակոբյան Ժաննա – դոցենտ (ռուսաց լեզվի ամբիոն)

Հանդիպումներ

26.02-ին կազմակերպվել է հանդիպում բանաստեղծ-արձակագիր-երգիծաբան Ս.Խալաթյանի հետ (գրականության ամբիոն):

25.06-ին կազմակերպվել է Ս.Խալաթյանի 3 գրքերի շնորհանդեսը (գրականության ամբիոն):

01.07-ին կազմակերպվել է հանդիպում բանաստեղծ Արա Սիմոնյանի հետ (գրականության ամբիոն):

Ամբիոններում քննարկված ատենախոսություններ

Աստղիկ Ժորայի Բալայան - *Ձևաբանական գիտելիքների ուսուցման մեթոդական համակարգը տարրական դպրոցում* (հայոց լեզվի ամբիոն)

Տիգրանուհի Յուլյա Ներսեսյան - *Հեքիաթն իբրև տեքստ և խոսույթ. ըստ հայկական, ռուսական և անգլիական հեքիաթների նյութի* (հայոց լեզվի ամբիոն)

Ելենա Շահենի Հայրիկյան - *Գաբրիել Գարսիա Մարկեսի երկերի հայերեն թարգմանությունների լեզվական առանձնահատկությունները (բնագրի և ռուսերեն ու անգլերեն թարգմանությունների համեմատությամբ)* (հայոց լեզվի ամբիոն)

Էմմա Գազիկի Նիկոյան – *Սուրեն Այվազյանի գեղարվեստական արձակը* (գրականության ամբիոն)

Մարինե Վլադիմիրի Մկրտչյան – *Արցախյան ազատամարտը Ջորի Բալայանի ստեղծագործություններում* (գրականության ամբիոն)

Լուսինե Զոհրակի Մուրադյան – *Հայերենի, անգլերենի և ռուսերենի բայի դիմավոր ձևերի գուգադրական-տիպաբանական քննություն* (հայոց լեզվի ամբիոն և օտար լեզուների ամբիոն)

Մասնակցություն գիտաժողովների

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողով (Վ.Փիլոյան, Ա.Եդոյան)

Մեծանուն լեզվաբան Մանվել Ասատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժող (Երևանի պետական համալսարան) (Լ.Պետրոսյան, Հ.Մելքոնյան)

«Մասնակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո» (Երևանի պետական համալսարան) (Հ.Հարությունյան, Ա.Մանթոյան, Դ.Գյուլգաստյան, Լ.Պետրոսյան, Հ.Մելքոնյան)

«Ջահուկյանական ընթերցումներ» (Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ) (Հ.Հարությունյան, Դ.Գյուլգաստյան, Լ.Պետրոսյան, Հ.Մելքոնյան)

Շիրակի պատմամշակութային ժառանգությունը միջազգային գիտաժողով (Շիրակի հայազիտական հետազոտություններ կենտրոն) (Լ.Պետրոսյան)

ՈՒԳԸ

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ամենամյա նստաշրջան (մայիս) – 3 ուսանող, 6 զեկուցում (յուրաքանչյուրը՝ 2-ական):

Հայ –Ռուսական համալսարանի ուսանողական գիտական ամենամյա նստաշրջան (մայիս) – 2 ուսանող-զեկուցում:

Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողական գիտական ամենամյա նստաշրջան (մայիս) – 6 ուսանող, 7 զեկուցում:

Արցախի պետական համալսարանի ուսանողական գիտական միջազգային նստաշրջան (հոկտեմբեր) – 3 ուսանող-զեկուցում:

Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի միջազգային գիտաժողով (հոկտեմբեր) – 1 ուսանող-զեկուցում:

Վանաձորի պետական համալսարանի ուսանողական գիտական միջազգային նստաշրջան (հոկտեմբերի 14) – 10 ուսանող-զեկուցում:

Շարժունության ծրագիր

2015-2016 ուստարում արտասահմանյան բուհերում 1-ամյա ուսումն ավարտել և վերադարձել են 4 ուսանողներ (Կոստանդյան Թամարա՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մագիստրատուրայի 2-րդ կուրս, Սեդրակյան Նորա՝ «Անգլերեն լեզու և գրականություն» 4-րդ կուրս, Մաթոսյան Օֆելյա՝ «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրս, Գասպարյան Սարիետա՝ «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրս):

2016թ. արտասահմանյան բուհերում ուսանելու են մեկնել 9 ուսանողներ (Հովհաննիսյան Կարինե՝ «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրս, Պետրոսյան Վարդ՝ «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրս, Մինասյան Մելինե՝ «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրս, Շահումյան Գոհար՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մագիստրատուրայի 1-ին կուրս, Բալայան Աննա՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մագիստրատուրայի 1-ին կուրս, Մալոյան Անի՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մագիստրատուրայի 1-ին կուրս, Մարուքյան Մանուշակ՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մագիստրատուրայի 1-ին կուրս, Ազոյան Ռաիսա՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մագիստրատուրայի 1-ին կուրս, Հանթայան Անահիտ՝ «Թարգմանչական գործ» 4-րդ կուրս):

Մատենավարությանն ու գնահատմանն առնչվող հարցեր

Յուրաքանչյուր շաբաթ ավագ խորհրդատու Հ.Բարխուդարյանը և կուրսերի խորհրդատուները դեկանին են ներկայացնում մատենավարության վիճակը: Վերջինս քննարկվում է նաև ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի նիստերում, թերացողներին արվում են դիտողություններ, տրվում են հանձնարարականներ: Ամբիոնների նիստերում անպայման անդրադառնում են թերացումներին, առկա խնդիրներին, աշխատում են արավորինս կարճ ժամկետներում շտկել դրանք: Աշխատանքը արդյունավետ է, որովհետև մատենավարության հարցում որոշակի առաջընթաց է նկատվում: Ուշադրության կենտրոնում է նաև գնահատման հարցը. կարևորվել է գործնական պարպմունքների ժամանակ խմբի բոլոր ուսանողներին անաչառ գնահատելու անհրաժեշտության հարցը:

Անհատական և ինքնուրույն աշխատանքների կազմակերպման հարցեր

2016թ. ամբիոնների դասախոսների կողմից վերանայվել են անհատական և ինքնուրույն աշխատանքների ձևերն ու թեմաները, որոնց մի մասն արդեն ընդգրկված է ԱՌԻՄՓ-ներում, իսկ մյուս մասը քննարկման փուլում է: Առաջիկայում այդ աշխատանքները կվերանայվեն մանկավարժության ամբիոնի կողմից մշակված «Ուսանողների ինքնուրույն աշխատանքի տեխնոլոգիա» և «Ուսանողների ինքնուրույն աշխատանքը՝ որպես կրթություն ստացողի զարգացման և ինքնակազմակերպման հիմք» մեթոդական ցուցումներին համապատասխան:

2016թ. հոկտեմբերին օտար լեզուների ամբիոնի նիստում վերանայվել են 2015-2016 ուստարում ուսանողների կողմից իրականացված անհատական և ինքնուրույն աշխատանքները, և ընդունվել է որոշում ընդլայնելու ինքնուրույն աշխատանքների տեսակները՝ հաշվի առնելով ուսանողների հետաքրքրություններն ու հետազոտական աշխատանքներ իրականացնելու շրջանակները: Որոշմանը հաջորդել են հստակ քայլեր. ամբիոնի վարիչի ղեկավարությամբ կազմվել է 3 վերլուծական գնահատման սանդղակ 3 տեսակի ինքնուրույն և անհատական աշխատանքների համար, հաջորդ կիսամյակում նախատեսվում է ևս 3-ը՝ իրենց համապատասխան գնահատման սանդղակներով: Հաջորդ կիսամյակից ուսանողները կունենան հնարավորություն ընտրելու ինքնուրույն աշխատանք՝ հնարավոր 6 տարբերակներից:

Մայիսին ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս Ժաննա Հակոբյանի կողմից մշակվել և գիտամեթոդական սեմինարի քննարկման է ներկայացվել ինքնուրույն աշխատանքների գնահատման ձևեր՝ ռուբրիկների միջոցով, որը կիրառելի է որոշ ինքնուրույն աշխատանքների, մասնավորապես՝ պրեզենտացիաների, պրոբլեմային դասերի և այլն գնահատման համար:

Ինչպես առկա, այնպես էլ հեռակա բաժնի ցածր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների հետ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ ամբիոնի գրեթե բոլոր դասախոսների կողմից, տրվում են լրացուցիչ առաջադրանքներ, ուսանողի կողմից չյուրացրած նյութը կրկին բացատրվում և ամրապնդվում է համապատասխան հանձնարարություններով:

Գրականության ամբիոնում հանձնարարվում են մշակումներ, բանահյուսական նյութերի գրառումներ, գիտական բնույթի ուսումնասիրությունների մշակումներ, գրական երկի՝ այլ արվեստների միջոցներով արտահայտություններ՝ նկարչություն, երաժշտություն, թատրոն, քանդակագործություն: Ապահովվում է միջառարկայական կապ, ընդլայնվում է գիտելիքների շրջանակը: Անչափ կարևորվում է թեմաների ընտրությունը, որոնք նպատակային լինելու առումով պետք է լրացնեն դասընթացը՝ բարձրացնելով մասնավոր հարցերի իմացության մակարդակը: Ինքնուրույն աշխատելը մեծապես հետաքրքրում է ուսանողին և առավել արդյունավետ է:

Դասախոսական տեքստերի լսում և քննարկում

Դասախոսական տեքստերը վերանայվել են 2014-2015 ուստարվա ընթացքում, որոնք 2015-2016 ուստարում քննարկվել են դասալսումներից հետո: 2016թ. հոկտեմբեր-նոյեմբերին այդ քննարկումները շարունակվել են: Հատուկ քննարկման առարկա են դարձել ԱՌԻՄՓ-ներում նորագույն գրականության ցանկի ընդլայնման և դրանք դասախոսական տեքստերում ընդգրկելու, առարկայի արդիական հիմնախնդիրներին և վերջնարդյունքներին ԱՌԻՄՓ-ների բովանդակային համապատասխանության հարցերը:

Ուսումնական ծրագրերում վերջերս ներառված դասընթացների դասախոսական տեքստերը նախապես քննարկվում են, արժանանում ամբիոնների հավանությանը նիստերում կամ սեմինարների ընթացքում կամ էլ երաշխավորվում են այդ դասընթացը պատկերացնող համապատասխան մասնագետի կողմից:

Ռուսաց լեզվի ամբիոնի դասախոսներ Մ. Հակոբյանը և Գ. Հովհաննիսյանը նախապատրաստում են ուսումնամեթոդական նյութեր (ձեռնարկ) ոչ մասնագիտական ֆակուլտետների *Ռուսաց լեզու* առարկայի համար՝ համալրելով և վերամշակելով նախկինում տպագրված ձեռնարկը:

Արդիական թեմաների շուրջ սեմինարների կազմակերպում

Սեմինարների կազմակերպման հիմքում որպես ելակետ են դիտարկվում դասախոսների ներառվածությունը ամբիոնների գիտական ուղղությունների ուսումնասիրության մեջ և դասախոսների անձնական ու գիտական հետաքրքրությունների շրջանակը: Այս իմաստով չկա որևէ թեմա կամ սեմինարի նիստ, որ չունենա արդիական հնչեղություն:

2016թ. հայոց լեզվի ամբիոնի գիտամեթոդական սեմինարներում մշտապես քննարկվել են լեզվաբանական ներգիտակարգային և միջգիտակարգային ոլորտներին առնչվող հարցերը: Դրանք արտացոլված են այդ սեմինարների նյութերում: Այսպես՝ *Բայի ուսուցման համագործակցային եղանակը որպես սովորողի բառապաշարի հարստացման և լեզվամտածողության զարգացման միջոց: Որոշյալությունը և նրա իմաստային դրսևորումները ժամանակակից հայերենի հարադիր կապակցություններում և դարձվածքներում: Պարբերության ըմբռնման ընդլայնման փորձ: Պատճառական բայերի սեռային արտահայտության հարցը արդի հայ քերականագիտության մեջ* և այլն:

Ռուսաց լեզվի ամբիոնը իր գիտամեթոդական սեմինարների նյութ է ընտրում ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների ամենարդիական հարցերը, մասնավորապես՝ ժամանակակից լեզվաբանության արդի հիմնախնդիրներ, ինքնուրույն աշխատանքների գնահատման հարցերը և այլն: Դրա վկայությունն է նաև հոկտեմբերին կազմակերպված միջազգային գիտաժողովը: Ուշադրություն է դարձվում որակի ապահովման խնդրներին, մասնավորապես՝ համապատասխանեցվել են ԱՌԻՄՓ-ներում նշված ռեսուրսները (CD, DVD, գրականությունը) համալսարանում և ամբիոնում առկա ռեսուրսներին:

Օտար լեզուների ամբիոնում վերոնշյալ գնահատման սանդղակները կիրառելու նպատակով կազմակերպվել են մի շարք սեմինարներ պրեզենտացիաների տեսքով: Սեմինարները անցկացվել են օտար լեզուների ամբիոնի դասախոսների և «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բարձր կուրսերի ուսանողների կողմից, որոնց ընթացքում ուսանողներին և դասախոսներին ներկայացվել և հանգամանալից կերպով բացատրվել են գնահատման սանդղակներում ընդգրկված բոլոր չափորոշիչները: Գնահատման սանդղակները հասանելի են նաև հայերեն տարբերակով: 2016թ. ամբիոնի գիտամեթոդական սեմինարներում քննարկվել են հետևյալ թեմաները՝ «Բլենդինգը (բառախառնուրդը) որպես բառապաշարի հարստացման արդյունավետ միջոց», «Զուգադրական մոտեցումը անլերենի իմացության հիմքի վրա ֆրանսերեն դասավանդելիս»:

Մագիստրոսական թեզերի թեմաների առնչությունը ամբիոնների գիտական թեմաներին

2016 թվականին հայոց լեզվի ամբիոնում հեռակա բաժնում մագիստրոսական թեզ է պաշտպանել վեց ուսանող (ամբողջ կուրսը), որոնք բոլորն աշխատել են «Ժամանակակից հայերենի բայի արժույթը» թեմայով՝ հաջողությամբ պաշտպանելով մագիստրոսական թեզը: Այս թեման համահունչ է ամբիոնի կողմից որպես գիտահետազոտական ուղղություն նախանշված «Ժամանակակից հայերենի քերականության հիմնահարցեր» ուղղությանը: Առկա բաժնում մագիստրոսական թեզ է պաշտպանել չորս ուսանող՝ Սրբուհի Գասոյանը՝ «Խոսքամասային փոխանցումները ժամանակակից հայերենում», Շողիկ Պետրոսյանը՝ «Հայոց լեզվի կենցաղային բառապաշարի լեզվական քննություն», Գոհար Սարուխանյանը՝ «Բայի եղանակաժամանակային ձևերի հարաբերությունները շարահյուսական բարդ կառույցներում», Հերմինե Պարանյանը՝ «Լեզվական ինքնատիպությունը Հ. Մաթևոսյանի «Մեծամոր» խոհագրության մեջ» թեմաներով, որոնցից առաջին երեքը համահունչ են ամբիոնի գիտահետազոտական ուղղություններին:

Գրականության ամբիոնում մագիստրոսական թեզերի թեմաների ձևակերպման հիմքում ընկած են հետևյալ իրողությունները.

ա) այդ թեմաների համապատասխանությունը դպրոցական ծրագրերում ներառված հեղինակների և ստեղծագործությունների հետ,

բ) այդ թեմաների համապատասխանությունը ամբիոնի նախատեսած գիտական ուղղությունների հետ (գրական կերպար և Լոռում ծնված և Լոռուց ծնված գրականություն),

գ) այդ թեմաների արդիական հնչեղությունը՝ կապված գրական պրոցեսի և հայ գրականության ու գրականագիտության արդի հիմնախնդիրների հետ:

Այս ամենի արդյունքում մագիստրոսական թեզերի թեմատիկ ամբողջությունը բավարարում է մագիստրանտների ինչպես գիտական, այնպես էլ գեղագիտական պահանջմունքները:

Ռուսաց լեզվի ամբիոնի կողմից առաջարկված մագիստրոսական թեզերի թեմաները անմիջականորեն կապված են ամբիոնի գիտական ուղղվածության հետ, մասնավորապես՝ 2015-2016 ուստարվա 4 մագիստրոսական թեզերը առնչվում են էթնոլեզվականության, միջմշակութային հաղորդակցության, իմաստաբանության և այլ դասընթացների հետ:

2016 թվականին օտար լեզուների ամբիոնում առկա բաժնում մագիստրոսական թեզ է պաշտպանել տասներկու ուսանող (ամբողջ կուրսը): Մագիստրոսական թեզերի թեմաներից 7-ը տեղավորվում է օտար լեզուների ամբիոնի գիտական թեմայի՝ «Անգլերեն լեզվի արդի հիմնահարցերը» շրջանակներում:

Վերջին երեք տարիների կատարած աշխատանքների համեմատությունը ցույց է տալիս, որ կան թերացումներ: Այսպես՝ պակասել է ֆակուլտետ ընդունվող դիմորդների թիվը: «Թարգմանչական գործ» մասնագիտությամբ վերջին անգամ ընդունելություն եղել է 2013թ.: 2015թ. չնայած հայտարարվեց ընդունելություն, սակայն բաժինը չգործեց դիմորդների բացակայության պատճառով: «Լրագրություն» մասնագիտությամբ նույնպես չենք կարողանում յուրաքանչյուր տարի կուրս ձևավորել: Հետաքրքրությունը պակասել է նաև «Հայոց լեզու և գրականություն» և «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությունների նկատմամբ: Կան օբյեկտիվ պատճառներ՝ արտագաղթ, դպրոցների շրջանավարտների նվազում, սակայն պետք է ընդունել, որ տարվա ընթացքում դիմորդների հավաքագրման

գործընթացը այնքան էլ հաջող չենք կազմակերպում: Հայտնի է, որ ցանկացած գործում հաջողության կարևորագույն գործոն է գովազդը: Ուրեմն կաղում ենք այս հարցում:

Բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝
Ա.Պողոսյան